

Պ. Շահին միանգամայն օժտեալ նկարիչ մըն է ու խղճամիտ, խուզարկու եւ դիւրաւ չգոհացող զծագրէի մը : Բայց այս թերթին մէջ փորագրելէ միջ մասնաւորապէս կը շահագրգռէր, եւ միզի օգտակար թուեցաւ անոր գործին մէկ ցուցակը ներկայացնել, թէպէտեւ այդ գործը սկզբնաւորութիւն մըն է դեռ : Այս աւրուեստագէտը անոնցմէ չէ՞ արդեօք որոնց վրայ մեծ յոյսեր կրնան դրուիլ : Մինք կը հաւատանք որ այդպէս է, եւ ավագան պիտի ընէ թէ իրաւունք ունինք կամ ոչ :

ՔԼԷՄԱՆ-ԺԱՆԷՆ



ՀԱՅ ԵՐԱԺԵՏՈՒԹԻՒՆԸ Ի ԲԱՐԻՉ

La Tribune de Saint-Gervais երաժշտական ամսագիրը, զոր կը հրատարակէ «Սքուլա քանթրոն»-ը՝ եկեղեցական երաժշտութեան նոր հիմնաւած ընկերութիւնը, կը ծանուցանէ իր օգոստոսի թուոյն մէջ թէ Պ. Բիէռ Օպոի, արեւելագէտ, եւ անդամ այդ ընկերութեան, յառաջիկայ ձմեռ երեք քանախօսութեամբ պիտի ներկայացնէ հայկական երաժշտութիւնը (եկեղեցական եւ ժողովրդական) Բարիդի նուագասէրներուն : Պ. Եղիազարեանցի ծրագրին է որ կը սկսի իրազ ըծուիլ : Բանախօսութիւններուն պիտի ընկերանան շարականներու խմբովին երգեցողութիւններ զոր պիտի կատարեն Ս. Ժէպլիկի հովակաւոր երաժշտական Պ. Շառլ Պորտի երգիչները, եւ սօյոռները պիտի երգէ Պ. Նիկողարեանց :

ՆԻՔՍՈՒՄԱՅԻ ՈՐԲԱՆՈՅԸ



Հնդուներեցանք տարեկան տեղեկագիրը Նիքսոսիայի Հայկական Որբանոցին, զոր շատ ուշիմ կերպով կը վարէ Պ. Բիւրքեհան, Մանչէսթըրի, Բարքլի եւ Ալեքսանդրիոյ երեք խնամակալ ամանախումբերուն հովանաւորութեանը տակ : Պէտք չկայ բացատրելու մասնաւոր կարեւորութիւնը այս բարեգործական եւ

կրթական հաստատութեան, եւ կը փափաքենք որ զայն հետզհետէ աւելի ընդարձակուած աւելի բարգաւաճ տեսնենք :

Պ. ԶԵՐԱԶԻ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Պ. Զերազ կը ծանուցանէ թէ աւարտած է իր պատասխանը մեր «Պատասխանատուութիւնները» յօդուածին : «Անհատի մտաւայ թիւերէն մեկուն մէջ պիտի յայտնենք մեր կարծիքը Պ. Զերազի տուած բացատրութեանը մասին :



Յաւաքիկայ քոռով, պիտի հրատարակեմ յօդուած մը ԿէՕՔԷի վրայ իր ծննդեան հարիւր յիսնամեակին առթիւ որ այս օրերս կատարեցաւ Գերմանիոյ մէջ :

ՎՐԻՊԱԿ

«Անահիտ»-ի 9—10 թուոյն մէջ, Տր. Տ. Եսայեանի յօդուած, Ա. սիւնակ, էջ 266, տող 2-4 «բաղդատմամբ անդամաբանութեան», պէտք է ուղղել «բաղդատական պնդամբանութեան տեսակետով» :

Վ. Նալբանդեանի յօդուած, էջ 289 Բ. սիւնակ տող 17, «ցոյց տալ զեղ. առաքյալներն եւ երեւոյթները այնպէս ինչպէս ցունկալի էր որ լինէին» . պէտք է ուղղել «այնպէս ինչպէս որ կան եւ ոչ այնպէս ինչպէս որ ցունկալի էր լինին» . էջ 290, Բ. սիւնակ, տող 1, «եւթ. իրականութիւնը», պէտք է ուղղել «եւթ. զրականութիւնը» . էջ 291, Բ. սիւնակ, ք. պարբերութեան 5. տող, «մարդկային կարիքը», պէտք է ուղղել «մարդկային կուրճքը» . էջ 292, Ա. սիւնակ ք. պարբերութիւն, 5. տող «վաղներ», պէտք է ուղղել «վանդեւ. նոյն էջ, Բ. սիւնակ, տող 2 «ընդունակութիւնը» պէտք է ուղղել «ընդգործակութիւնը» :

«Հերոգիտ» , էջ 284, տող 1, «սարերուն», պէտք է ուղղել «ստերերուն» :



Paris. — Impr. V. ALBOUY, 75, avenue d'Italie.

Le Gérant: GEORGES WALINE.